ՊԱՆԴԽՏՈՒԹԻՒՆԸ ՄԵԶԱՆՈՒՄ

ԱՆՈՒՇ. ՔԱԼԱՆԹԱՐԻ

Վերջին տարիները թէ մտաւոր շրջանների և թէ մամուլի ուշադրութիւնը գրաւել է մեր տնտեսական հարցերից մէկը, որը ընդհանուր անունով կոչւում է պանդխտութեան խնդիր։

Ինչպէս է կատարւում մեզանում պանդխտութիւնը, ինչ դրութեան մէջ է խնդիրը և ինչպէս են նայում մեզանում այդ խնդրի վերայ, այդ պիտի լինի մեր յօդուածի նիւթը։

Պանդուխտ մենք անուանում ենք այն մարդուն, որը, իւր ծննդավայրը թողած, գնում է ուրիշ տեղ, բայց որը վերադառնալու ցանկութիւն ունի։

Պանդուխտ ասելով մեր յօդուածում մենք հասկանալու ենք միայն այն տեսակներին, որոնք հեռացել են գիւղից և ապրում են նոյնպէս ֆիզիքական աշխատանքով, կամ առհասարակ՝ ոչ-մտաւոր աշխատանքով։

Խնդիրը լաւ պարզաբանելու համար, առաջ մի հայեացք գցենք նորա զարգացման պատմութեան վերայ։

Պանդխտութիւնը նոր խնդիր է և նորա մասին լիշատակութիւն չը կայ հին գրականութեան մէջ. նա մեր նոր կեանքի՝ տնտեսական կեանքի՝ ծնունդ է։ Մեր Անդրկովկասի պանդխտութիւնը հետևանք է մեր տնտեսական կեանքի իւրատեսակ զարգացման, իսկ Տաճկաստանի և Պարսկաստանի պանդխտութիւնը հետևանք է տնտեսական կեանքի խանգարման։ Մեզանում հողային խնդիրները կնճռոտելով հասցրել են այն դրութեան, որ առանց պանդխտութեան ապրել չի լինիլ. իսկ Տաճկաստանում քաղաքական անլսող պայմանները խոչընդոտ լինելով տնտեսական կեանքի զարգացման, քայքայելով գիւղացու տնտեսութիւնը, ծնել են պանդխտութիւնը, որը կորստաբեր է ազդում այնտեղի ժողովրդի կեանքի վերայ։ Այսպիսով Անդրկովկասի, Տաճկաստանի և Պարսկաստանի պանդխտութեան պատճառը մէկ է. տնտեսական է. բայց մեր երկրում (Կովկասում) նա հետևանք է տնտեսական կեանքի զարգացման, իսկ Տաճկաստանում և Պարսկաստանում հետևանք է գլխաւորապէս տնտեսական կեանքի կանոնաւոր ընթացքի խանգարման։

Մենք այս յօդուածում պիտի գլխաւորապէս խօսենք Անդրկովկասի պանդխտութեան մասին, իսկ Պարսկաստանի պանդխտութեան վերաբերեալ այնքան կանգ կ'առնենք, որքան նա կապ կամ ազդեցութիւն ունի մեր պանդուխտների խնդրի վերաբերեալ։

Պանդխտութեան մեծ կենտրոններ համարւում են մեր գիւղացիների համար՝ Բաղուն, Թիֆլիսը, Անդրկասպեան երկիրը, Երևանը, Գանձակը, Բաթումը և այլ մեր նահանգական և գաւառական քաղաքները և կենտրոնները, իսկ զարադաղցի (Պարսկաստանի) հայ մշակների պանդխտելու կենտրոնը պիտի համարել Շուշին։

I

Յօթանասնական թւականների՝ սկզբում և թէ նորանից էլ շատ առաջ, ինչպէս և հիմա, շատ նկատելի էր՝ այն երևոյթը, որ մեր գաւառական փոքր քաղաքներից և գիւղերից, աշունը սկսելուն պէս, երբ գիւղական ծանր աշխատանքը վերջացած էր լինում, մեծ քանակութեամբ մեր տանու արհեստաւորները ճանապարհւում էին դուրս իրանց տեղից, դէպի մեծ կենտրոնները, իրանց համար գործ գտնելու։ Դոցա մէջ աչքի էին ընկնում գլխաւորապէս հիւսները, քարտաշները, կլէկչիները, զինագործները և այլն։ Բացի արհեստաւորները՝ քիչ քանակութեամբ գնում էին և այնպիսի գիւղացիներ, որոնք պատահական, ընտանեկան և այլ մանր պատճառներից ստիպւած էին թողնելու մի առժամանակ գիւղը, մինչև որ մի փոքր միջոց գտնեն կրկին գիւղ վերադառնալու։ Վերջին տեսակի պանդուխտները պարապում էին և մշակութեամբ՝ գլխաւորապէս Թիֆլիսում, Երևանում, Գանձակում և այլ՝ այն ժամանակ լայնի վաճառանոցներում. շատ քիչ քանակութեամբ և Բաղու էին գնում։ Բաղուում գլխաւորապէս լինում էին պարսկաստանցի և բաղուցի թուրք մշակներ, քանի որ այն ժամանակ Բաղուում քրիստոնեաներ քիչ կային, իսկ մահմեդականները երբէք գործ չէին տալ կատարելու ոչ-մահմեդական մշակների, որոնք այժմ կազմում են կովկասցի պանդուխտների ամենամեծ կոնտինգենտը...

Մինչև 70-ական թւականները կիսապանդխտական շարժում կար Ղուբալի և Դերբենտի կողմերում, ուր տորոնի մշակութիւնը գրաւում էր բազմաթիւ մշակներ Դաղստանի լեռներից։ Դաղստանցիների պանդխտութիւնը այժմ կատարւում է այլ ուղղութեամբ, դէպի Անդրկասպեան երկիրը, ուստի անմիջապէս չի մտնում մեր տեսութեան մէջ...

Պանդխտական խնդիրը աւելի բազադրեալ և հետաքրքրական է դառնում դործարանական շրջաններում, որոնցից ամենաուժեղն է Բաղուն։

Յօթանասնական թւականների սկզբումն էր, որ Բաղուայ նաֆթի արդիւնաբերութիւնը սկսեց ուշադրութիւն դրաւել։ Բաղուայ նաֆթի արդիւբերութիւնը սկզբում այնքան փոքր էր, որ մեր և օտար կապիտալիստները

դեռ ուշք չէին դարձնում նորա վերայ, բայց ահա 1874 թուականը [1]) գուշակեց Բագուին մեծ ապագայ և այդ օրից սկսեցին Բագւում կենդրոնանալ գումարաւոր մարդիկ՝ դրամատէրեր. սկսեցին նաֆթի հողեր առնել և նաֆթ արդիւնահանել։ Մի քանի տարուայ մէջ Բագուն ճանաչել չէր կարելի. սկսեցին գումարներ խաղալ, վաճառականութիւնը մեծացաւ և սկսեց աւելի և աւելի գրաւել թէ հարուստ դրամատէրերին, և թէ աշխատող, արդիւնաբերող ձեռքեր.—Բագուն ժամերով էր մեծանում... Նաֆթի արդիւնաբերութիւնը մեծացաւ և մեծ աշխատանքը ակներև էր, մշակող ձեռքեր էին հարկաւոր. Պատահական պանդուխտ մշակները, աւելի օգուտ տեսնելով նաֆթի մշակութեան գործից, քան քարւանսարաններում գիշերապահութիւնից, սայլապանութիւնից, բեռնակրութիւնից,-վարձւեցին այդ գործին.

Գործի պահանջը աւելի մեծ էր, շատ էր, քան աշխատող ձեռքերը. պահանջը առաջարկութիւնից գերազանցում էր, հետևաբար բանւորի վարձը շատ բարձր էր. Արհեստաւորների մի մասը թողեց իւր գործը և մշակ վարձւեց նաֆթի հորերում և գործարաններում. Պարսկաստանի թուրք մշակների մի մասը, թէպէտ սկզբում շատ փոքր, վարձւեց նոյնպէս նաֆթի գործին. Սորանից մի քանի տարի առաջ՝ Բագւայ թուրքը անպատւաբեր կը համարէր նաֆթագործարաններում և հորերում մշակութիւն անելը. գլխաւորապէս նա ասպարէզ ընտրել էր ծովի, նաւերի վերայ աշխատանքը, բայց այժմ նորա դրութեան վատանալը, գործարանի բանւորի բարձր գինը խլեցին նորան նաւերից էլ, հողից էլ, գիւղից էլ և դարձրին բանւոր այն գործին, որը առաջ նա ստոր էր համարում... Բայց աշխատող մարդկանց հարկաւորութիւնը, աշխատանքի պահանջը շատ մեծ էր. Մշակները իմաց էին տալիս իրանց համագիւղացիներին, բերել էին տալիս Բագու, իսկ ով իրան ուղղւած էր համարում, կարճ ժամանակից յետոյ վերադառնում էր գիւղ կլորիկ գումարով, սնդուկով, սամովարով, իւր կնոջ, մօր, քրոջ և ազգականների համար նւէրներով, և այլն... կարգի էր բերում իւր տնտեսութիւնը և ապահովում իւր կեանքը...

Ակներև աշխատանքը, քաղաքից եկածների փայլը, նորա «մարդ» դառած լինելը՝ շլացնում էին, նախանձ էին գրգռում համագիւղացիների սրտում. Ամեն տուն աշխատում էր իւր որդուն, եղբօր, մարդուն ուղարկել շուտով Բագու՝ հարստանալու և «մարդ դառնալու» [2])...

Այս երևոյթը մինչև այսօր էլ շարունակւում է և նկատելի է, քանի որ այժմ էլ պանդխտի օտարութեան մէջ արած աշխատանքը դեռ բարձր

---

[1]) Այդ թւականին յայտնւեց առաջին նաֆթի շատրւանը—Մելիքեանց -նաֆթահողում։

[2]) Տես Լէօի «Պանդուխտը» արտ. «Մշակ» լրագրից, հրատ. Արշ. Քալանթարի, Բագու 1886 և «Հայ գիւղացին և օրը» Ս. Մ. Շահնազարեանցի, արտ. «Մուրճ» ամսագրից, Թիֆլիս 1890.

է, քան գիւղացու ստացածը, եթէ նա տանը մնար. բայց այս մասին ներքեր մանրամասնաբար կը խօսենք...։

Մենք տեսնում ենք այդպիսով, որ մեր պանդխտական կեանքի զարգանալու հէնց սկզբի օրերից, մեծ դեր է խաղում քաղաքից եկածների արտաքին փայլով չլանալը և քաղաքի ակներև աշխատանքը...։ Քաղաքը իւր աշխատանքով մրցում է գիւղի հետ, մրցման չնորհիւ խլում է աշխատող ձեռքերը գիւղից։ Մեծ արդիւնաբերութիւնը սկսում է ծեծել և կլանել փոքրին և զրկում է գիւղական փոքր արդիւնաբերութիւնը ուժից և շատ թէ ուշ պիտի բոլորովին յաղթի էլ, որովհետև այդպէս է մեր տընտեսական կեանքի ընթացքը։ Այդ ճանապարհով է ընթացել նա Եւրոպայում և այդպէս էլ կը գնայ մեզանում, քանի որ տնտեսական նոյն պայմանները անպատճառ պիտի արտադրեն նոյնատեսակ հետևանքներ...

Ով հետաքրքրուել է մեր երկրի պանդխտութեան խնդրով, նա նկատած կը լինի, որ պանդխտութիւնը գլխաւորապէս վերաբերում է հայ գիւղացուն, իսկ յետոյ վրացի և վերջ ի վերջոյ մեր երկրի թուրք ազգաբնակութեան։

Հայ գիւղերը պատմական-տնտեսական հանգամանքների չնորհիւ, համարեա, քիչ բացառութեամբ, լեռներումն են գտնուում։ Շատ քիչ հայ գիւղեր կան, որ գտնուում լինեն դաշտ-տափարակում, իսկ ընդհակառակն՝ լեռնային թուրք գիւղեր մեզանում այնքան էլ շատ չեն։ Շուշայ և Ջաբրայիլ գաւառների գիւղական տնտեսական կեանքը ուսումնասիրող Ա. Գ. Դեկոնսկու ասելով՝ հայերը լեռնցիներ են. չնորհիւ յարձակումների և տափարակի անառողջ կլիմայի՝ հայերի լեռներում ապրելու սէրը այնքան մեծ է, որ մինչև հիմայ ոչ մի գիւղ չի համաձայնում իւր ապրուստի ձևը փոխելու [1]։ Թուրքերը նախկին տիրապետութեան ուժով բռնել են գաւառիս ամենալաւ տեղերը (տափարակի ջրովի հողերը), և պարապում են այգեգործութեամբ և թթենիների մշակութեամբ [2]։ Այդ գաւառների բնակիչների 96 տոկոսը պարապում են երկրագործութեամբ, իսկ հայերը բացառապէս երկրագործութեամբ [3]։ Նոյն կարծիքը մենք գտնում ենք միւս հետազոտութիւնների մէջ։ Զելինսկու ասելով, Զանգեզուր գաւառի հայ և Սիսեան մահալի թուրք ազգաբնակութիւնը բացառապէս պարապում է երկրագործութեամբ (հացահատիկ) և տաւարապահութեամբ [4]) և այլն։

Մեր գիւղացիների գլխաւորապէս երկրագործ և լեռնցի լինելը իմանալուց յետոյ, եթէ կանգ առնենք մեր երկրի տեղագրական և կլիմայական

---

[1]) Матеріалы для изученія экономическаго быта госуд. крест. Закавказ. края, томъ IV часть I, Шушинск. и Джебраилск. уѣз. изс. Л. Г. Деконскаго.

[2]) *Նոյն տեղը։*

[3]) *Նոյն տեղը։*

[4]) Изсл. С. Зелинскаго. томъ IV, ч. I Зангезурскій уѣздъ.

պայմանների վերայ, կը համաձայնւենք, որ մեր Անդրկովկասում կան այնպիսի տեղեր, ուր ձմեռուայ ձիւնը գալուն պէս՝ ճանապարհները կապւում են և երկրի զանազան մասերը բոլորովին զրկւում են հաղորդակցութիւնից. ամենքը մտնում են իրանց տները և մինչ գարուն սպասում նորից եղանակի կակղանալուն, որ կարողանան նորից դուրս գալ. իսկ մեզանում, ինչպէս յայտնի է, տանու-արհեստագիտութիւնը տեղ տեղ ամենևին չը կայ կամ իւր զարգացման ստոր աստիճանի վերան է, բացի մի քանի ճիւղերը՝ հիւսնութիւնը գլխաւորապէս։ Մեր գիւղացին ամբողջ ձմեռը պարապ է, շնորհիւ երկրի տեղագրական դիրքի և տանու-արհեստագիտութեան բացակայութեան, կամ քիչ տարածւած և զարգացած լինելուն. Մեր տանու արհեստագիտութիւնը գլխաւորապէս կանանց ձեռքին է. կանայքը դորանով պարապում են ձմեռը. Ամառը երբ կանայքը լինում են ամառանոցներում՝ միմիայն պատրաստութիւններ են տեսնում ձմեռուայ աշխատանքի համար՝ թել են մանում, կաժ պատրաստում, նիւթ պատրաստում կարպետի, գորգի, շալերի, մահուդի, կտաւների համար և այլն. Ի հարկէ կանանց մասնակցութիւնը գիւղական գործերում դորանով չէ սահմանափակւում. Ս. Զելինսկին վկայում է [1]), որ Ալէքսանդրապոլի գաւառում համարեայ դաշտային գործերի կէսը կատարում են գեղջկուհիները, որոնք տղամարդկանցից վատ չեն գործում, թէպէտ նոյնը չէք պատահիլ Երևանեան նահանգի տաք կողմերի հայերի մօտ. Պատմում է և մի դէպք, ինչպէս մի գիւղում պատահել է կնկայ, տղամարդու շորերով, միւս տղամարդկանց հետ գործելիս... Նոյն Զելինսկու ասելով [2]) կտաւը Սիսեանում տղամարդիկն են գործում, իսկ Զանգեզուր գաւառի մնացած տեղերում կանայքը. Տղամարդին ինչ է մնում անելու, բացի մի քանի մանր մունր արհեստները [3]), նա կամ հանգստանում է, կազդուրւում է իւր ամառուայ ծանր աշխատանքից յետոյ և կամ եթէ նորա տնտեսութիւնը կաղում է, իսկ ինքը աւելորդ է ընտանիքի մէջ, շտապում է աշնանը՝ դաշտի աշխատանքը վերջացնելուց յետոյ՝ գնալ կամ

---

[1]) Матер. для изуч. экон. быта гос. крест. томъ I. вып. I. Александроп. уѣзд. изсл. С. П. Зелинскаго.

[2]) Исл. Зелинскаго—IV т. I час.

[3]) Մենք այստեղ կը դնենք Զանգեզուր գաւառի արհեստաւորների թիւը և կը տեսնենք, որ շատ քիչ քանակութիւն է կազմում. (Ис. Зелинск. IV т. I час.). Աշուղներ—28, զուռնաչի և դոհլչի—79, բրուտ—37, կօշկակար—14, քեչա և չուլ շինող—95, քարտաշ—134, սնդչի—24, ներկարար—28, դարբին, փականագործ, պայտառ—91, անագչի—27, պղնձագործ—6, զինագործ—7, համետագործ—28, հիւսն—231, դերձակ—48, ոսկերիչ—11, սափրիչ—63, կտաւ գործող (տղ.)—131. բացի այդ գիւղացիք զանազան գաւառներում պարապում են ածուխ այրելով, աղիւսագործութեամբ, դառնում են սայլապան և փուրդունչի, ջաղացպան, եղական, ուղտապան, չարւադար և այլն.

մի քանի տարով կամ մինչև զարունը բացակայելը՝ մի որ և է կողմնակի գործով պարապելու քաղաքում կամ մի այլ տեղ։

Այժմ մի խնդիր է ծագում, ինչու հայը և թուրքը շատ անգամ ապրելով նոյն պայմաններում, հաւասար չափով չեն գնում պանդխտութեան, օրինակ զանգեզուրցիք։ Այդ կարելի է բացատրել նորանով, որ թուրքերի տնտեսական դրութեան վատանալը համեմատաբար ուշ է սկսել նկատուել։ Հայը պատմական ժամանակից հալածուած և ճնշուած է եղել տիրապետող թուրք տարրից, և միշտ մտածում է եղել մի ելք գտնելու իւր դրութիւնը բարւոքելու համար և այդ ժամանակներից դեռ սովորութիւն է արած եղել գնալ հեռու տեղեր գլուխ պահելու։ Նա կամաց կամաց հայի մէջ կազմել է մի տեսակ ձեռնարկու ոգի և բնաւորութիւն, աւելի, քան իւր հարևան թուրքի մէջ, որը միշտ աւելի լաւ դրութեան մէջ լինելով, չնորհիւ պարսիկ կառավարութեան տենդենցիական վերաբերման, սովորել է համեմատաբար աւելի զանդաղկոտութեան և ծուլութեան։ Եթէ թուրքին չէր աջողուում եղել մի բան, նորա համար դժուար չէր լինում նոյնը լրացնել լափշտակելով. բայց այժմ, երբ նորա տիրապետող ուժը թուլացել է, և լափշտակելով ու կողոպուտով նա էլ չի կարող ապրել, իսկ տնտեսական գրութիւնը քայքայուում է, նա ևս իւր ապրուստը պահպանելու համար ստիպուած է գնալ պղնձահանքերը, նաֆթահորերը և գործարանները և աւելի հեռուն։ Զանգեզուր գաւառի Ղափան մահալի դիւղացիք գնում են մօտիկ Հալիձորի, Կարթի և այլ պղնձահանքերում աշխատելու, և եթէ չէր սխալւում իմ ծանօթը, որը հանքում ծառայողներից էր, մշակների կէսը թուրքեր են։ Նոցա մէջ էլ տնտեսական դրութեան վատանալը սովորութիւն է գցում պանդխտանալը...

Մեր կարծիքով թուրքերի քիչ պանդխտանալու պատճառը ընդհանրապէս դրութեան համեմատաբար լաւութիւնն է, բնաւորութեան դանդաղկոտութիւնը և ծուլութիւնը և վերջապէս պանդխտանալու սովորութեան չը լինելը։ Աշնանը գնացած պանդուխտների մի մեծ մասը մնում են գիւղից դուրս մինչև իրանց հունձի սկսելը. յուլիսի մէկից առհասարակ պղնձագործարանները փակւում են մշակ չունենալու պատճառով։ Շարուր-Դարալագեազ գաւառի (գլխաւորապէս Դարալագեազ) տզամարդկանց 10%-ը գաշտի աշխատանքը աւարտելուց յետոյ՝ գնում են աշխատանքի Երևան, Նախիջևան, Գանձակ, Թիֆլիս, իսկ ով երկրագործութեամբ չի պարապում [1]), զարնանը, ամառը և աշնանը վարձւում է իւր հարուստ հարևանների մօտ բան։որ [2])։

---

[1]) «Ով երկրագործութեամբ չի պարապում նախադասութիւնը պիտի հասկանալ՝ ով հող, վար ու ցանք չունի մտքով։

[2]) Матеріалы для изуч. экон. быта госуд. крест. IV—ч. 2. сѣверо-западной части Шарура и восточ. часть Даралагеза. Ш.—Д. уѣзд.—изсл. А. В. Первицкаго.

Մենք չատ անգամ պատահել ենք դարձանը բազմաթիւ մշակների, բարձր սար գիւղերից, որ ձմեռը Բագու են անցկացրել և դառնում են եղել հայրենիք։ Եւ ինչ էք կարծում՝ երբ են նոքա իրանց գիւղը հասնում։ Նոքա սկսում են դաշտ-տափարակից (արան) հնձուոր վարձած, ե հնձելով հնձելով՝ կամաց կամաց բարձրանում են լեռները և հասնում են իրանց գիւղը այն ժամանակ, երբ իրանց գիւղի հունձը նոր սկսում է։ Այդ հնձուորների լեռներ բարձրանալը տևում է 1—2 ամիս... [1]) Բացի սա, լեռնային գիւղերից, տափարակի հունձը սկսելուն պէս, Շուշալ և Ջաբրայելի գիւղացիք թողնում են իրանց տնտեսութիւնը և գնում են դաշտ տափարակը աշխատելու. [2]). Արարատի և շրջակայ լեռնացիները, գարունը սկսելուն պէս, գնում են մշակութեան Արարատեան տափարակը, և նոյնպէս Երևան քաղաքը՝ մօտ մի ամսով այգիներ փորելու, ստանալով օրական 30—40 կոպ. և երբեմն 50 կ. իրանց հացով. իսկ ամառը 6—10 օրով հունձի՝ ստանալով օրավարձ 80—1 ր. 20 կ. և կերակուր։ Այդ կարողանում են անել նորա շնորհիւ, որ գարնանը գիւղացին գործ չատ չունի և նա կարող է տունը թողնել. նոյնը նա անկարող է անել ամառը, իրանց հնձի ժամանակ, երբ մինչև անգամ գիւղացին հնձուորներ է վարձում և այդ ոչ թէ նորա համար, որ նորա ցանքը այնքան չատ է, որ ինքը մէնակ իւր ընտանիքով անկարող է վերջացնել, ոչ, այլ այդ պահանջում է երկրագործութեան մի անկարմարութիւնը, որ գիւղացին չի կարող երկար արտը չը հնձած թողնել, որովհետև հատիկները կը թափւեն, և երկրորդ՝ հարուստ գիւղացիները իրանց հունձը աւարտելուց յետոյ (հնձուորների օգնութեամբ), առհասարակ արձակում են տաւարը խոզանը արածելու, առանց ուշք դարձնելու թէ աղքատների արտը հնձած է թէ ոչ. այս հանգամանքը հարկադրում է աղքատներին էլ հնձուորներ վարձել և իրանց հարևանների հետ միասին հունձը վերջացնել [3]).

Այս մեր վերև լիշածից պարզ է, որ առաջինը՝ պանդխտութեան գնում են լեռնցիները, իրանց երկրի տեղագրական դիրքի և տանու արհեստագիտութեան բացակայութեան պատճառներով. նոքա գնում են պանդխտութեան կարճ ժամանակով, և նոցա աշխատանքը լինում է իբր մի օժանդակ նոցա մշտական գործին՝ երկրագործութեան. գնում են աշնանը և դառնում ամառը կամ գարնանը։ Այս տեսակ պանդուխտներին պիտի ի նկատի ունենալ և զանազանել այն պանդուխտներից, որոնք գնում են աւելի երկար

---

[1]) Մեզ յայտնի է, որ մեր երկիրը, թէպէտ գտնւում է բաւարար կլիմայում, բայց նոքա զանազան մասերը, զանազան կլիմաների են. մի օրայ մէջ մեզնում տրօպիկական տաքերից կարող էք անցնել սառնամանիք մասերը, որտեղ մշտական ձիւն և մշուշ է թագաւորում. դրա համար էլ մեր հունձը միաժամանակ չի սկսւում. Սալեանի և ուրիշ տաք կողմերում հունձը սկսւում է մայիսին, իսկ լեռներում տևում է մինչև հունձի ժամանակը և օգոստոսի առաջին կէսը։

[2]) Изслѣд. Шушин. и Джебр. уѣзд. —Деконскій.

[3]) Сводъ матеріаловъ, Х. А. Вермишевъ, т. IV ч. I ст. 458.

ժամանակով, և որոնց գնալու պատճառը միայն այդ չէ, ինչ-որ կարճատև պանդխտութեանը, այլ ուրիշ աւելի լուրջ պատճառներ։ Ինչպէս այդ երկու տեսակ պանդուխտները տարբերւում են ժամանակի մեծութեամբ, նոյնպէս տարբերւում են նոքա և իրանց պարապմունքներով. կարճատև պանդխտութեան գնացողը իւր համար անյարմար է համարում բեռնակրութեամբ և նորա նման բաներով պարապել, մինչդեռ երկարատև պանդուխտների գլխաւոր պարապմունքը բեռնակրութիւնն է և ցնոտ այն պաշտօնները, որին այնքան սիրահար է կարճատև պանդուխտը...

Պանդուխտների վարած պաշտօնները լինում են գործարաններում մշակութիւն, քարւանսարաններում և բաղարներում գիշերապահութիւն, սալլապանութիւն և այլն. Կարճատև պանդխտութեան գնում են յաճախ կիսադաշտ և կիսալեռնային գիւղացիք, կամ աւելի ընդհանուր խօսքով՝ քիչից շատ ապահովուած գիւղացիներ, ուրեմն ոչ շատ աղքատ գիւղացիները։ Շամախու, Գեօգչայի, Շուշւայ, Շարոպանի (Իմերեթիա) և այլ գաւառների գիւղացիք, թէպէտ գնում են և երկարատև պանդխտութեան, բայց սոքա մեծ մասամբ պատկանում են կարճատև պանդուխտների խմբին, իսկ հակառակը Զանգեզուրի, Դարալագեազի, Նախիջևանի, Հաճէի (Իմերեթիա) և այլ գաւառների գիւղացիք,—սոքա գլխաւորապէս պատկանում են շատ տարիներով մնացողներին և սոցա նշանաւոր պարապմունքը կազմում է բեռնակրութիւնը և ցնոտ ուրիշ աշխատանքներ։

Այս մեր ասածից դեռ չը պիտի եզրակացնել, թէ դաշտ-տափարակի գիւղացիք չեն պանդխտանում. Նոքա ևս մասնակցում են այդ շարժման, բայց ոչ այն չափով, ինչ լեռնային գիւղացիք։ Դորա պատճառները շատ շատ են, որոնցից մի երկուսը վերև յիշեցինք, իսկ մնացածների մասին կը խօսենք ներքև։ Դաշտ—տափարակցի պանդուխտների թիւը շատ չէ։ Այդ տեսակները շատ են Նախիջևանի գաւառում, ուր հեռանալու գլխաւոր պատճառներից մէկը՝ ջրի պակասութիւնն է։

Այս բոլոր պատճառները, որ պանդխտութեան խնդրի ներկայ դրութեան մէջ շատ էլ մեծ դեր չեն խաղում, առաջ, այդ խնդրի ամենաէական գրգիռ պատճառներն էին, եթէ ի նկատի չ'առնենք պատահական պատճառներ՝ երաշտութիւնը [1]) մորեխը [2]) մուկը, կարկուտը, հեղեղը, 1879—80 թւականի սովը, գիւղական կռիւները։ [3]) Բայց մեր տնտեսական կեանքը զարգանալով առաջ է բերել և մի մեծ պատճառ, որը ընդհանուր անունով կոչւում է սակաւահողութեան

---

[1]) Սաստիկ երաշտութիւնը շարունակ այցելում է Նոր-Բայազէտի գաւառը։

[2]) Այս 1890 թւականին մորեխը սրբել հնձել է ցանքերը ահագին տարածութեամբ, շատ տեղ էլ մնացածը կարկուտն է տարել։

[3]) Տես. «Մուսինի գանգատը». Ա. Ագապեան. Հր. Տիգրան Դոնդուազեանցի արտ. «Նոր-Դար»-ից 1890 թ.

խնդիր... Սակաւահողութեան խնդրի մէջ մտնում են շատ պատճառներ, որոնք գուցէ առանձին առանձին կարող էին մեծ դրդիչ հանգամանքներ համարուել, ինչպէս անկանոն հողատիրութիւնը, ալինքն հողի սեպհականութեան անհաւասար դասաւորութիւնը հասարակութեան մէջ, գաշտային մշակութեան միջոցների և գործիքների անկատարելիութիւնը, գիւղական հարստահարութիւնները[1]) չարչի ցեցերը, հարկերի, ակցիզի և այլ տուրքերի ծանրութիւնը, ճանապարհների և մօտիկ վաճառանոցների բացակայութիւնը և այլն...

Սակաւահողութիւն առաջ բերող հանգամանքները, բացի մեր լիշածը՝ 'ի հարկէ էլի շատ շատ կարող են լինել, ինչպէս հայ կնոջ դերը, ազգագրական առանձնայատկութիւնները [2]), բայց թէ դոքա և նոյնպէս դաշտային մշակութեան ձևերի անկատարելիութիւնը և այլն կազմում են այն տեսակ պատճառներ, որ եղել են միշտ, բայց այժմ աւելի գուցէ նկատելի են դարձել. բայց միւս պատճառները, ինչպէս հողային անհաւասարութիւնը, գիւղական հարստահարութիւնը և այլն, քանի գնում զարգանում են և մեծ ծաւալ ընդունում, և գառնում ներկայ դրութեան մօտիկ պատճառներ։

Դառնանք այժմ այն երևոյթներին, որոնք առաջ են եկել աւելի ուշ և նպաստել են սակաւահողութեան զարգանալու արագութեան...

Հողի քանակութիւնը վերջին 20 տարուայ մէջ մնացել է նոյնը, ինչ որ էր առաջ, նահապետական մեծ, 40—50 և աւելի՝ անձերից բաղկացած ընտանիքները բաժանելով, բաժանել են իրանց հետ և իրանց հողը։ Այդպիսով հողաբաժինները սկսել են փոքրանալ։ Երկրորդ, չը նայած տնտեսական դրութեան վատանալուն՝ մեր երկրի ազգաբնակութեան բազմանալու տոկոսը էլի շատ մեծ է... Երրորդ, վերջին ռուս-թուրքական պատերազմի ժամանակ, թէպէտ քիչ, բայց էլի գաղթողներ եղան մեր երկիրը և քանի-քանի ընտանիքներով գետեղուեցան մեր գիւղերում։ Այս բոլորի հետևանքը մէկ է՝ հողի քանակութիւնը չի փոխուում, իսկ ազգաբնակութիւնը անդադար աւելանում է։ Արքունական գիւղացիների տնտեսական դրութիւնը ուսումնասիրողների ասելով [3]), մեր գիւղացիների հողաբաժինները բոլոր տեսակ հողերի, լարմար թէ անլարմար, դասաւորուում է հետևեալ կերպով, զանազան գաւառներում.

Ամեն մի ծուխ ունի՝

Շարուր Դարալագեազում. . . . . 20—25 դեսեատին

---

[1]) տես. Պ. Պռոշեանի «Հայոց խնդիրը», արտատպած «Փորձ» ամսագր. և «Ցեցերը» արա. «Մուրճ»-ից 1889 թ..

[2]) «Մուրճ» № 6 1890.

[3]) Շուշայ և Զաբլայելի գաւառի համար միայն լեռնային շերտի մասին է մեր խօսքը։

Ալեքսանդրապոլի գաւառում 15,42
Զանգեզուրում. 14,87
Շուշուայ գաւառում . . . . 18,98 } [1]
Ջաբրայելի գաւառում. . . . . 10,91 }

Եթէ համեմատելու լինենք այդ գաւառների գիւղացիների հողաբաժինները՝ կը տեսնենք, որ ամենամեծը գալիս է Շարուր-Դարալագեազի գիւղացու բաժինը՝ 20—25, իսկ ամենափոքրը Ջաբրայիլինը—10,91 դես. բայց դորանից դեռ չի կարելի եզրակացնել թէ Շարուր-Դարալագեազցին պիտի աւելի լաւ ապրում լինի քան Ջաբրայելցին: Ընդհանուր հողի բաժինը, քանակութիւնը դեռ չի որոշում ժողովուրդի բարեկեցութիւնը: Այդ կախուած է նորանից, թէ մեր երկրի այս կամ այն մասի հողերը, որքան չարմարութիւններ և ապահովութիւն են տալիս գիւղացուն: Ժողովրդի բնակչութեան խտութիւնը միայն բաւական չէ բարօրութեան հարցը վճռելու համար: Իշխան Վասիլչիկովի բերած թւերից [2] *երեւում է, որ թէպէտև Բելգիան և Հոլանդիան ամենախիտ բնակեցրած երկիրներն են, համեմատաբար առած Անգլիայի, Գերմանիայի հետ և այլն, սակայն այդ երկու երկիրներից գաղթականութիւնը աւելի թոյլ է, քան նոյն իսկ Անգլիայում և Գերմանիայում: Դորա նով նա ապացուցում է, որ միայն երկրի ազգաբնակութեան խտութիւնը չէ դեր կատարողը, այլ դիցուք՝ Անգլիայի համար ունեն նշանակութիւն նաև հողային և սոցիալական խնդիրները, իսկ Գերմանիայի համար—միլիտարիզմը:*

Մի քառակուսի մղոնի վերայ ապրում են Ռուսիայի

Կուրսկեան նահանգում . . . . 2100 *մարդ* }
Նովգորոդեան նահանգում. . . . . . 1367 » }
Չերնիգովեան նահանգում . . . . . . 1638 » }

իսկ Օստզէյի նահանգներում

Լիֆլանդեան նահանգում. . . . . . 1198 » }
Կուրլանդեան » . . . . . 1203 » }
Էստլանդեան » . . . . . . 901 » }

Թէպէտ և Օստզէյի նահանգների ազգաբնակութիւնը աւելի նօսր է, քան Ռուսիայի միջին նահանգներինը, բայց գաղթականութիւնը աւելի մեծ է: Այդ առաջ է գալիս հողի և հարստութեան անհաւասար բաժանման շնորհիւ: Թէպէտ և միջին հաշւով գիւղացիները այնտեղ աւելի հարուստ են քան Ռուսիայում, բայց և այնտեղ բազմաթիւ է բանւորների և անհող գիւղացիների թիւը [3]...

---

[1] *Այսուհետեւ բոլոր իմ նիւթերս Շարուր-Դարալագեազի մասին քաղուած պիտի լինի Պաւլեցկու, Ալէքսանդրապոլի և Զանգեզուրի—Զելինսկու, Շուշուայ և Ջաբրայիլ գաւառների մասին Դեկոնսկու հետազօտութիւններից:*

[2] Князь А. Васильчиковъ—Землевладѣніе и земледѣліе въ Россіи и въ Европ. госуд.—1881 г. изд. втор. томъ I.

[3] Землевладѣніе и земледѣліе.—Князь А. Васильчиковъ.

Աւելորդ ենք համարում վկայութիւններ բերելու, պարզած լինելու համար, որ շատ անգամ այնքան ազգաբնակութեան խտութիւնը չէ որոշում ժողովուրդի լաւ գրութիւնը, որքան այն պայմանները, որոնք տալիս են դիւղացուն ապրելու յարմարութիւն. դոքա են 1. երկրի տեղագրական և կլիմայական պայմանները, 2. հողի մշակութեան ձևը և ոյժը, արդիւնաբերող նիւթերի ինչ լինելը, 3.—հողի կանոնաւոր կամ անկանոն բաժանելը։

Մեր երկիրը լեռնային է և քարքարոտ։ Հենց դորա շնորհիւ էլ մեծ քանակութեամբ անյարմար հողեր կան երկրագործութեան համար. այդ հողերը ներկայացնում են կամ վատ արօտներ կամ անջուր անապատներ, կամ բոլորովին անպէտք քարակոյտեր։ Երկրի տեղագրական այդ պայմանների շնորհիւ. Զանգեզուր գաւառի հետազօտող Ստ. Զելինսկու ասելով, գիւղերը չեն կարողանում ընդարձակուել և դորա պատճառով էլ մուլքերը մէկը միւսից հեռու հեռու են և բազմաթիւ։ Նոյնն է ասում Պարւիյկին Դարալագեազ գաւառի մասին, ուր արօտատեղերը շատ են, շնորհիւ նորան, որ երկրի տեղագրական պայմանները անկարելի են դարձնում երկրագործութեամբ պարապելը։

Անյարմար հողը կազմում է բոլոր հողի հետևեալ մասը։

Շ.-Դարալագեազում	58,16%
Շուշւայ գաւառում	32,25%
Զանգեզուր »	50,16%
Զաբրայիլ »	45,27%
Ալեքսանդրապոլի գաւառում	28,86%

իսկ այդու, ցանքի, արօտի և անտառի տեղերը կազմում են.

Շ.-Դարալագեազում	41,34%
Շուշւայ գաւառում	67,75%
Զանգեզուրի « »	49,84%
Զարրայիլի « »	54,02%
Ալեքսանդրապոլի »	71,14%

Այսպիսով Շ.-Դարալագեազի 20—25 դես. հողաբաժնից յարմար է. 10,46 դ.

Շուշւայ գաւառում	18,39	»	»	12,84 »
Զանգեզուրի գաւառում	14,37	»	»	7,81 »
Զաբրայելի »	10,91	»	»	5,97 »
Ալեքսանդրապ. »	15,42	»	»	10,91 »

Անյարմար հող, ինչքան ուզում էք, ունեցէք, նա համարեա ոչինչ չի աւելացնում, գլխաւորը՝ յարմար հողի քանակութիւնն է։ Եւ բանից ինչ դուրս եկաւ Շ. Դարալագեազը, որ երևում էր ամենաչատ հող ունեցողը, համարեա սակաւահողներին է պատկանում, դեռ մեր վեր առած գաւառ-

ներում [1]։ Ամենամեծ հողաբաժին՝ այս մեր առած գաւառներում ունի Շուշւայ գաւառը, իսկ ամենափոքր չարմար հողաբաժին՝ Ջաբրայիլինը...

Բայց սորանից էլ դեռ բան չենք իմանում գիւղացու բարեկեցութեան մասին, քանի նոյն դեսեատինա հողը կարող է զանազան արդիւնք տալ. նայած թէ արդիւնաբերող նիւթը ինչ է. օրինակ մի դեսեատինան, որը ցանած է.

[2] Բրինձ (Երեւան. նահ.)՝ տալիս. է . . . . . . 127,6 ռուբ. արդիւնք.
Սիմինդր (Քութաիսի նահանգ.) . . . . 130,58 »
խաղող (Ելիսավետպօլի նահ.). . . . . 158—335 ռ. »
» Թիֆլիսի նահ. . . . . 175—294 » »
» Երեւանի նահ. . . . . 100—161 » »
Ցորեն—դեմի.[3] 34
» ջրովի 57

Ինչպէս որ 34-ը—100-ը—335-ը միեւնոյնը չեն, այնպէս էլ միեւնոյնը չէ թէ գիւղացու ստացած հողաբաժինը ինչ տեսակին է պատկանում. գիւղացին մի դեսեատին խաղողի այգով կարող է առատ առատ ապրել, մինչդեռ 5 դեսեատին դեմի ցորենի ցանքով չի կարող նորանից գոնէ քիչ վատ ապրել, այլ կ'ապրի աղքատ, որովհետեւ ամեն մի դեսեատին խաղողի այգուց գիւղացին կը ստանայ 7—8 անգամ աւելի արդիւնք, քան մի դեսեատին դէմի ցորենի արտից։

Հասկանալի է դառնում այժմ, թէ ինչու Քութայիսի նահանգի Շարոպան գաւառի գիւղացին, չընայած, որ անհամեմատ քիչ հող ունի քան Ելիսաւետապոլի նահանգինը. այնուամենայնիւ աւելի լաւ է ապրում. Վերմիշեւի ասելով՝ Քութայիսի նահանգի հողաբաժինը 5—7 անգամ աւելի քիչ է քան մնացած նահանգներինը. [3]), Այս կարճ դատողութիւնից երեւում է, որ իսկապէս մեծ նշանակութիւն ունի արդիւնաբերող նիւթերի ինչ լինելը.

Այժմ մի խնդիր էլ մնում է անվճիռ. Մի դեսեատին խաղողի այգին զանազան տեղ զանազան արդիւնք կարող է ցոյց տալ. դա կախուած է հողի մշակութեան ձեւից եւ ուժից, ճանապարհներից, երկաթուղուց, վաճառանոցների հեռու կամ մօտիկ լինելուց։ Որովհետեւ մեր երկրի շատ մասերում արհեստական պարարտացնելը չը կայ, ցանւում են մշտական նոյն բոյսերը, ուստի դորանից առաջ է գալիս հողի յոգնելը, որ եւ արդէն դառել է մեծ խնդիր... Ալէքսանդրապոլ գաւառի մասին օրինակ Գ. Տէր-Պետրոսեանը ասում է. [4]) հողը թէպէտ պտղաբեր է, բայց ներկայումս յոգնած,

---

[1]) Մենք այս գաւառները առել ենք իբր օրինակներ, համարելով միւսների պայմանները էլ նոյնը։ Բաքուայ մշակների մեծ մասը Զանգազուրի, Դարալագեազի, Շուշի, Ջաբրայիլ գաւառներից են և այլն։

[2]) Свод материал. изсл. Вермишева т. IV

[3]) Свод. матер. т. IV.

[4]) Труды общ. Сел. Хоз. № 11—1885 Причины безд. кр. Тер-Петросовъ.

ուժասպառ է եղած դաշտային մշակութեան անկատարելութեան շնորհիւ. իսկ բացի վերոյիշեալից մեզանում հողը մշակւում է անդրջրհեղեղեան ձևով, միայն մի քանի տեղ մտցուած են եւրոպական և տեղային հանգամանքներին յարմար երկրագործիքներ...

Վերջապէս խօսենք մեր նկատած երրորդ այն կէտի մասին՝ թէ հողը կանոնաւոր է դասաւորուած հասարակութեան մէջ թէ ոչ։

Շատ անգամ եթէ հաշուելու լինենք մի նահանգի, գաւառի, գիւղի հէնց թէկուզ յարմար հողի քանակութիւնը և բաժանելու լինենք զորանմշակող գիւղացիների թուի վերայ՝ կը ստանանք ամեն մի գիւղացու համար այնքան մեծ հողաբաժին, որ կը թուայ, թէ այդ քանակութեամբ գիւղացին կարող կը լինէր միջակ ապրել. բայց փորձը հակառակն է ցոյց տալիս.—մի գիւղում 10 դեսեատին հող ունեցողի հարևանը՝ 1, ½դես.ունի՝ կամ ամենևին հող չունի։ Այս բանը թէ աւելի աչքի է ընկնում սեպհականատէր հասարակութիւնների մէջ, բայց մեր համայնական հողատիրութիւնը դորանից զերծ չէ։ Զը նայած այս բանին առ այժմ ուրիշ միջոց չունենք արդիւնքը հաշուելու, իմանալու, քան համայնքի միջին մեծութեան հողաբաժնի վերայ մեր ուշքը դարձնելով, ամեն տեսակ մշակութեան համար առանձին առանձին (խաղողի, բրնձի, ցորենի և այլն)։ Այս բոլոր խորհրդածութիւններից լուսոյ պարզ է, որ գիւղացու բարօրութիւնը հասկանալու համար հարկաւոր է հաշուել նորա մի տարուայ հողաբաժնից ստացած արդիւնքը, հաշուել իւր մշակութեան և իւր անհրաժեշտ ծախքը և տեսնել, որքան ապահովել կարող է հողը։ Մեր խնդրի համար նշանակութիւն ունի հացահատիկներից ստացուած արդիւնքը, որովհետև ինչպէս և վերև նկատեցինք, պանդխտութեան գնացողները դլխաւորապէս լեռնային գիւղացիներն են, որոնք թէ կլիմայական և թէ տեղադրական պատճառներով, չեն կարող դաշտ-տափարակցու նման խաղողի, բամբակի, բրնձի մշակութեամբ պարապել։ Դաշտ-տափարակցիք չեն կազմում մեր պանդուխտների գլխաւոր մասը, այլ նոքա միայն լեռնցի-երկարատև պանդուխտների թուի վերայ մի թիւ են աւելացնում։ Սակաւահողութիւնը մեր ասած մտքով դաշտ-տափարակցիներին շատ չէ վերաբերում։